

Վ. Գ. Սվազլյան

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ռոստովի մարզում բնակվող հայության ժողովրդական բանահյուսությունն իր մեջ գեղարվեստորեն արտացոլել է նրանց սոցիալ-տնտեսական պայմանները. տեղի բնությունն իր բուսական ու կենդանական աշխարհով, շրջապատի գյուղերն ու քաղաքներն իրենց բազմազգ բնակչությամբ և իրենց լեզվական ֆակտորայով: Այսպես, օրինակ. հեքիաթներից մեկում հերոսի՝ ածխավաճառի գործողությունները սերտորեն կապվում են Նոր-Նախիջևանի և նրա շրջակա Թոբդի, Չալթի, Մեծ Սալա հայաբնակ գյուղերի հետ: Կամ լամպի մասին գաղափար տվող «Քիրմանի կտագ, Թէփէն ձագ» հանելուկի մեջ համեմատության կողմ է դառնում, «Քիրմանի կտագը», այսինքն նովոչերկասկ քաղաքի բնակիչների օգտագործած յուրօրինակ գլխարկը, և կամ «Խելթիտ նսդիմ Դայդան էշթամ» արտահայտության մեջ նկատի է առնված Տագանրոգ քաղաքը, որն այդ տեղավայրի հայ բարբառում «Դայդան» ձևով է արտասանվում:

Կարելի է հիշել նաև «Մարիամը» երգը, որտեղ սիրեցյալը մոտակա Նեսավիթայ գյուղից է գալիս գիշերային հանդիպման.

Բազար՝ դարած, Նաշխաձ, պէրած Մարիամս,
Վաշթ պացվիլ էր գարմիր-ջէրմագ թուշէրտ,
Նիսվիթայէն ընծի յէգած կիշէրտ:

Այս տեղավայրի հայության ժողովրդական ստեղծագործությունների մեջ հաճախ՝ որպես գործող անձինք հանդես են գալիս ոչ միայն հայերը, այլև՝ ռուս բարիններն ու բարինաները, գեներալներն ու կազակները: Այսպիսով, դեպքերն ու դեմքերն անխզելիորեն կապվում են Դոն-Ռոստովյան միջավայրին:

Բանահյուսական տարբեր ժանրի նյութերի մեջ հաճախ պատահում ենք բազմաթիվ օտարամույժ բառերի, որոնք մինչև այժմ կիրառվում են նրանց առօրյա կյանքում. այսպես, օրինակ,

Քօփուր-կամուրջ: Խում—հող: Չորվախ—աղբյուր: Խամչի —մտրակ: Շանգան—մոմակալ:

Եթե տվյալ բարբառում թուրք-թաթարական նման փոխառությունները շատ հին ծագում ունեն, ապա Ղրիմից գաղթելուց հետո է, որ նրանց բառապաշարի մեջ մուտք են գործել ռուսերեն բառեր, ինչպես, օրինակ. կուղնեց—դարբին: Դոօգ—քառանիվ: Սեմեյստվա—ընտանիք:

Գործածված են հայոց լեզվի քերականական կանոններին ենթարկված ռուսերեն մի շարք բայեր.

Պազդարօվիտ արէցին—բարեկեցին: Ախրանյաթ ըրավ—պահպանեց: Սագլասիտ էղավ—համաձայնեց և այլն:

Այլ. Մյասնիկյանի անվան շրջանում գրեթե մոռացության են մատնված հայ ժողովրդական բանավոր ստեղծագործությունները: Հայության մեջ տարածված ժողովրդական երգերը քիչ են, եղածներն էլ հին ծագում ունեն:

Իրական դեպքերի ու դեմքերի գեղարվեստական վերհուշն ենք գտնում Ղարիբ Մելքոնի ողբերգական մահվան շուրջը ստեղծված երգի և կամ հայ գաղթականների հողերը բռնագրավող ու նրանց վաստակով հղիացող քաղաքապետ Խալիբյանի անձնավորության շուրջ հորինված երգի մեջ.

Շադ գուլում մաշթ էր
 Խալիբ Աղան,
 Մէր քաղաքի
 Զալում գալավան...:

Նման երգերը հիմք են տալիս ենթադրելու, որ այս տեղավայրի հայերն ունեցել են իրական, պատմական անցքերի շուրջ հյուսված վիպական երգեր:

Ինչ վերաբերում է ծիսական երգերին, ապա դրանք գրեթե իսպառ անհետացել են: Գյուղական հարսանիքներն այլևս չեն կատարվում ավանդական ծիսակատարությամբ: Եթե անցյալում այս տեղավայրի հայությունն ունեցել է փեսա հագցնելու հատուկ «պար» (իմա՝ սովորույթ, բարք), որի ընթացքում երգել են.

Այսօրիկ, իս նօր, այսօրիկ թաքավօր իսնօրիկ...
 կամ եթե հարսն իր հոր տնից դուրս գալու ժամանակ երգել է.

Մնացէք պարէվ, սիրեգան քույրէր:
 Դարօսը ցէր աչքին...

Իսկ ներկաները պատասխանել են.

Գէրթաս մէզմէն շադ շուզէլօվ,
 Անդէղ գէրաձտ շամիշօվ թուզ է,
 Աչքը դուպա, սիրգը գուզէ,
 Ըօրմէն, մօրմէն պարնվիլ շուզէր...

ապա այժմ այդ բոլորի միայն հիշատակն է մնացել. իրականում ոչ ծեսերն են կատարվում և ոչ նրանց համապատասխան երգերն ու պարերը: Այնուամենայնիվ տեղի հայության մեջ դեռևս հիշվում են անցյալի երգերից պատառիկները:

Իր պատկերավորությամբ և հուզականությամբ ուշագրավ է «Ղրիմի երբ», որից մեջ ենք բերում մի հատված.

Տիմացէն դեսա քէզի,
 Զէրմագ վաշթ կիդցա քէզի,
 Ֆօդ անէլու չխըյմիշէցի,
 Ուրիշին դվի քէզի...:

¹ Մենք նկատի չունենք այն երգերը, որոնք տեղ են գտել Ե. Շահադիզի «Նոր-Նախիջևանը և նոր-Նախիջևանցիք» ուսումնասիրության մեջ: Տե՛ս «Ազգագրական հանդես», Թիֆլիս, գիրք VII, VIII և IX:

Գեղարվեստական սեղմ, բայց արտահայտիչ գույներով է նկարագրված հարուստ Աթոյի—Սիմոնի աղջկա շքեղ զարդարանքները, և հարուստներին հատուկ մեծամտությունն ու արհամարհական վերաբերմունքը դեպի իրենց շրջապատը.

Գազ ու գէս ցէպլուշկան² վիզտ գախած,
Մարքարիդէ խոպանը³ մէշքտ գաբած,
Խաղա՛, ախշիգս, խաղա՛,
Աթոյի—Սիմոնին ախշիգն իս.
Հէշ ումուռտ թօղ շիլլա⁴:

Հակումը դեպի հարստությունն ու փողը առանձնապես զգացվում է քաղքենիական մի այլ երգի մեջ.

Դէսօք⁵ թօղ լա, թօղ շիլա,
Թէք⁶ ըսդագը շադ թօղ վա,
Իդա ախշգանը հարը
Իմիս բիանաս⁷ թօղ լա:

Հեռավոր կերպով հայ ժողովրդական «Ասլան Աղա» վիպերգն է հիշեցնում «Կնացէք, ասացէք բաբայիս» տխրերգը: Այդ երգում բանտարկված որդին խնդրում է հորը տունը-տեղը ծախել և պահանջված գումարով իրեն բանտից հանել: Հայրը հրաժարվում է օգնել որդուն: Նույն կերպ նն վարվում էրս բոլոր հարազատները: Միայն սիրած աղջիկն է պատրաստ ամեն տեսակ զոհաբերության: Անմիջականությամբ ու անկեղծ սիրով են համակված նրա հետևյալ խոսքերը.

...Վզիս մէդալիօնը գըծախիմ,
Հինք հարուր կրօշ ալ գըշինիմ,
Գըշինիմ, սիրէգա՛նս, գըշինիմ,
Գըշինիմ, գըհանիմ քէզ պանգից:

Քննադատական նուրբ հումորով է շարադրված «Բաբա՛, տուն ինծի վօրի՛ն բիդի դաս» երգը: Այս երգի մի այլ տարբերակը տարածված է նաև Հայաստանում, ըստ որի հայրն իր ծուլ աղջկան ի վերջո տալիս է գուռնաշու, որպեսզի նա միշտ զվարթ լինի: Այս նույն երգը Ռոստովի մարզի հայաբնակ վայրերում երգվում է, բայց վերջավորությունը տեղայնացված է հարմարվելով ռուսական կյանքին: Այնտեղ ծուլ աղջիկը տրվում է ոչ թե գուռնաշու, որը բնորոշ է հայկական կենցաղին, այլ «վարդանջիի», այսինքն՝ հարմոնահարի:

Հին կենցաղի հոռի ու այլաճակ կողմերի քննադատությունն է նկատվում «Օկա յեվ Իստիր մամանէր», «Մարիամ մօրքուրմա», «Ունանը» կենցաղային երգերում:

1779 թվականին Եկատերինա կայսրուհին առանձին հրովարտակով թույլատրել էր հայ գաղթականներին զինվորագրությունից ազատել, բայց հետագայում, փոփոխված հանգամանքներում, հայերը զրկվում են այդ արտո-

² Շղթա:

⁴ Բնավ վեճի լինի:

⁶ Միայն:

³ Գետի:

⁵ Գեղեցիկ:

⁷ Սկեսրայր:

նությունից և «սալդատ գնալը» գաղթականների համար դառնում է անհուն թղթերգություն: Դեռ մինչև օրս այդ տեղավայրի գյուղացիներից զանազան տարբերակներով կարելի է լսել «Ես իմ վիշագս հանեցի, էլա սալդատ կնացի» կամ «Առչի սալդատի յէրքը»: Ուշագրավ է նաև Հայրենական Մեծ պատերազմի օրերին հորինված «Սամպիկին դէրան» սրտակեղեք, բայց հաղթանակի լավատեսությամբ տոգորված զինվորի երգը:

Թեև քանակով քիչ, բայց մտահղացման տեսակետից հետաքրքիր են մանուկներին զվարճացնելու համար երգվող աշխույժ «Դանդանները» և ռիթմիկ «Հալլիվները», սրամիտ բառախաղերով ողողված շուտասելուկները և հանկարծակիորեն լուծվող հանգուցներով մանկական խաղերը:

Ժողովրդական բանահյուսության լիրիկական ժանրի ստեղծագործությունների մեջ ուշագրավ է նորալուսնին ուղղված հետևյալ աչքալուսանք-շնորհավորանքը.

— Նօր լուսին, նօր շնահօր,
Իմ ախպարս նօր թաքավօր,
Ձէր կնացիր, գէնչ⁸ էգար,
Ինձ ի՞նչ պէրիր արմաղան⁹:

Լուսին.— Յէրէսիտ քէսպէտ¹⁰,
Սիրդիտ սուն,
Մէռնիտ քէրէքէթ¹¹:

Ծերացող, բայց հավերժորեն երիտասարդացող լուսնի հետ է կապել ժողովուրդն իր լավագույն ակնկալիքները:

Այլ Մյասնիկյանի անվան շրջանում, գրեթե մոռացված են հայ ժողովրդական բանահյուսության ինչպես լիրիկական, նույնպես և էպիկական ժանրի ստեղծագործությունները: Գյուղական տներում այլևս չեն հավաքվում հեքիաթ լսելու հատուկ նպատակով: Հանելուկները ևս քիչ են հիշվում, միայն առածներն ու ասացվածքներն են, որ շարունակում են իրենց կենսունակությունը:

Այս տեղավայրի հայերի մեջ տարածված են և՛ ինքնատիպ, և՛ վարիանտաձև ստեղծագործություններ: Հետաքրքիր է «Դժիկոն» հեքիաթի տարբերակը, որտեղ տղան իր հորը ճաշ տանելու ժամանակ ոչնչացնում է ճանճերին և պաստառի վրա գրում ոչ թե ճանճ, այլ՝ ջան (շունչ, մարդ իմաստով):

Ուշագրավ է նաև «Կոնատ ախչիգը» հեքիաթի մոտիվներով զարգացող «Շէն թաքավօրին ախչիգը» տարբերակը, որտեղ ևս նմանությունների շարքի մեջ հանդես է գալիս ինքնատիպությունը: Նախ՝ թեև կարված աղջիկն ի նշան իր անմեղության կոչվում է Աղավնի, Բացի այդ, նա տանջվելով նենգ հարսի շարությունից, օրորոցում պառկած իր եղբորորդուն պատմում է իր վիշտը հետևյալ երգի միջոցով.

Նանի՛դ, նանի՛դ, անուշներով,
Օսգի է քէշիք¹², արզաթ գամար,
Մէշի բառգողը յէխպօրը զավագ,

⁸ Երիտասարդ:

⁹ Նվեր:

¹⁰ Շնորհք:

¹¹ Առատություն:

¹² Օրորոց:

Նանիգ դասէի յէիւպօրը օշթուն,
Մագիս թէլէրօվը գըգաբէի,
Սիրդիս գրագովը գըշօրցնէի,
Նանիգ գասէի յէիւպօրը օշթուն:

Սրտակեղեք մեղեդի ունեցող այս օրորոցային փոքրիկ երգն առանձին հուզականություն է հաղորդում հեքիաթին՝ ընդգծելով տարբերակի յուրօրինակությունը:

Ինքնատիպ հեքիաթներից ուշագրավ է «Աբուջանը», որի սյուժեն զարգանում է Ղրիմից բերված համանուն երգի մոտիվներով: Հետաքրքիրն այն է, որ այդ լիրո-էպիկական սիրերգը հեքիաթի նյութ դառնալով, որոշ զարգացում է ապրել և պերսոնաժի, և սյուժետային գծի տեսակետից: «Աբուջան» հեքիաթում որպես գործող անձինք հանդես են գալիս ոչ միայն սիրող զույգերը՝ Խամբերն ու Արզուն (ինչպես երգի մեջ է), այլև բնության և հասարակության շար ուժերը մարմնավորող կախարդ պառավը: Այդ շար էակը մինչև մահ վրեժխնդրությամբ է հիշում մանկության օրերին իր ջրի փարչը կոտրած Խամբերին և անվերջ պատուհասում է նրան՝ խափանելով սիրող զույգի երջանկությունը: Այս կախարդ պառավի կերպարի ստեղծմամբ է պայմանավորվում տվյալ հեքիաթի հրաշապատում բնույթն ու սյուժետային գծի հետագա զարգացումը: Բացի այս հեքիաթից, հրաշապատում երանգավորում ունեն «Փամիու խուզիի հեքիաթը», «Դէվրիշ բաբայի թուրը», որոնց մեջ պատմվում է թագավորի արհամարհված, բայց քաջ ու հնարագետ կրթասեր որդու արկածները, նրա հաղթանակը շար ուժերի նկատմամբ և բարեհաջողվերադարձը: Հրաշապատում բնույթ ունեն նաև «Շէն թաքավօրին ախիզը», «Սխտօրիկը», «Փէրատ մարը». «էրգաթէ կալի (դայլի) հեքիաթը»: Այս վերջին երկու հեքիաթներում որպես գործող անձինք հանդես են գալիս նաև մի շարք կենդանիներ՝ մարմնավորելով բնության և հասարակության մերթ շար և մերթ բարի ուժերը:

Ինչ վերաբերում է իրապատում հեքիաթներին, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք գեղարվեստորեն պատկերելով կյանքում հաճախ պատահող իրական դեպքերն ու դեմքերը, ունեն դաստիարակչական-բարոյախոսական բնույթ: Կոնկրետ իրական դեպքի շուրջ են հյուսված «Քօմուր ձախօղը», «Ով գրպանի, ան գուդէ», «Խէնթլուգը», «Ալէմի սուլթան, մէգ հագի սուլթան», «Թաթօն ու Փէթրիգէլան», «Չար բիանային հախէն էգօղ հարսը», «Գինմաշթու խէլքը» իրապատում հեքիաթները: Բանահյուսական վերոհիշյալ նմուշների փոքր ծավալն ու հանգուցյի հանկարծակի լուծումը նրանց տալիս է ժողովրդական նովելի տեսք:

Մտահղացման ինքնատիպությամբ և արտահայտչական միջոցների կատարելությամբ առանձնապես ուշագրավ են նաև տեղի հայության մի շարք հանելուկները: Այդ փոքրիկ ստեղծագործությունների մեջ գեղարվեստորեն պատկերված է ազգագրական այդ խմբի յուրահատուկ կենցաղն իր մանրամասնություններով, այսպես, օրինակ.

Դագը դախդագ, վրան դախդագ,
Մէջէն գէլլէ քուռչօտ ախքատ:

նման պատկերավոր համեմատությամբ է հարցադրված «Գուբաթի» կոշված տեղական ինքնատիպ թխվածքը:

Մի այլ հանելուկի մեջ տեղացի կանանց պատրաստած «խաթլամա» թրխվածքի գեղարվեստական պատկերով գաղափար է արվում կաղամբի մասին.

խաթ-խաթ, խաթլամա,

Մէշն ալ մէգ հսդ դայամա¹³:

Այստեղ տարածված են մի շարք անեծքներ ու օրհնանքներ: Ժողովրդական այս բանադրանքները հասկացություն են տալիս, թե մարդիկ ինչպես են գնահատել իրենց նմանների շար կամ բարի արարքները: Կրկնակի ուժգնությամբ են հնչում. Քօրանաս, աչքի լուստ գորվի: Խէվնաս, խէվ բադէրը իյնաս: Գաղդիս, միստ ուղիս»: Ժողովրդական ատելության և զայրույթի զգացումն այդպիսի թունոտ խոսքերով է արտահայտվում: Եվ ընդհակառակը, աշխատավոր մարդկանց բարոյական բարձր սկզբունքներն են դրսևորվում ժողովրդական օրհնանքներում: Այդ պատկերավոր դարձվածքներում, հաճախ, օգնության են կանչվում բնության տարրերը, երկնային ու երկրային ուժերը: Հիշենք. «Ասդղտ բայձառ թօղ ըլլա: Արևտ չըխավարի: Ֆօղ պոնիս՝ օսգի տառնա: Զլիս ու ձազգիս» և այլն:

Ժողովրդական դարավոր կենսափոխակերպության, իրերի ու երևույթների խորը ընդհանրացման արգասիք են նաև տեղի հայության օգտագործած առածներն ու ասացվածքները: Այդ սեղմ ու պատկերավոր արտահայտությունները գեղարվեստորեն խտացնում են նրանց հասարակական-պատմական փորձը, բնավորության լավագույն հատկությունները, և վառ հավատը գեղեցիկ ապագայի նկատմամբ:

Զարթաշ կյանքով ապրող և նույնիսկ օտարության մեջ «Քարից ճուրքամօղ» հայության այդ հատվածը ևս գովերգել է արհեստն ու արդար վաստակը. «Ջէնահաթը (արհեստ) օսգէ աբուջան է» և կամ «Պանը՝ պանէլօվ, ջամփան՝ քալէլօվ» արտահայտությունների միջոցով: Աշխատանքի մասին նրանք ասել են. «Կօրձը քէզմէն թօղ վախնա, տուն կօրձէն մի վախնա» իմաստավոր խոսքը: Սակայն այդպես չի եղել բոլորի վերաբերմունքը: Անցյալում հասարակության վերնախավին խորթ է եղել «հալալ վաստակի» գաղափարը, քանի որ «Ջէրմագ ձէոքը ուրիշի աշխատանքը գըսիրէ», «Այուվը (արջ) խարիբը գըխաղցունէ, դաբախը (դրամաման) զէնգինը գըպտըտցնէ»: Հասարակական նման հարաբերությունները ծնունդ են տվել ժողովրդական ըմբոստացման ու բողոքի, իսկ ժողովրդի ուժն անընկճելի է, քանի որ «Կէղ գանքնի, կէրան գըգօդէ», իսկ «Կէղին հախէն ասգված ալ չի կալ»: Այգնույն «կէղի մաշթիկ» — աշխատավոր մարդիկ ռեոլյուցիայի միջոցով են նվաճել դարերով տենչացած իրենց ազատությունն ու խաղաղ կյանքը: Ապրելով ու ստեղծագործելով սոցիալիստական հասարակարգում, Դոն-Ռոստովյան մարզի հայությունը հորինում է և իր նոր առածներն ու ասացվածքները, որոնք, անշուշտ, ժամանակի ընթացքում պիտի բյուրեղանան ու կոնկրետանան: